
ԵՐԵՎԱՆԻ
ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ





2016

ՏԱՐԵԿԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՄԱԼԱԹԻԱ-ՍԵԲԱՍՏԻԱ
ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ





Հարգելի՛ համաքաղաքացիներ,

2016 թվականն ամփոփում ենք նոր և համարձակ նախաձեռնություններով, ծավալուն նախագծերով և քաղաքային կառավարման ոլորտում որոշումների կայացման գործընթացին մեր համաքաղաքացիների ակտիվ մասնակցությամբ: Տարվա ընթացքում իրականացված բոլոր աշխատանքները հնարավոր եղավ կյանքի կոչել միայն համատեղ ջանքերի և փոխադարձ վստահության շնորհիվ: Ավանդական դարձած այս հաշվետվության միջոցով նպատակ ունենք մեկ անգամ ևս ընդգծելու, որ մենք հաշվետու ենք մեր համաքաղաքացիներին:

Նախորդ տարիներին իրականացված ծրագրերն այս տարի համալրեցինք նոր և լայնամասշտաբ նախաձեռնություններով. բարեկարգեցինք այգիներ, պուրակներ, փողոցներ ու բակային տարածքներ, կառուցեցինք նոր խաղահրապարակներ ու ժամանցի վայրեր: Շարունակեցինք կարգի բերել ու ավելացնել քաղաքային լուսավորությունը, ոռոգման ցանցերը, ընդլայնել ընդհանուր օգտագործման կանաչ տարածքները, և, իհարկե, կարողացանք վերանորոգել շենքեր, կրթության, մշակույթի ու մարզական օջախներ:

Տարվա ընթացքում կատարված բոլոր աշխատանքների հիմքում եղել է և շարունակում է մնալ մայրաքաղաքի համաչափ զարգացումը, արժանավայել քաղաքային միջավայրի ապահովումն ու մեր սերունդներին կանաչ Երևան ժառանգելու տեսլականը: Ուրախալի է, որ քաղաքում կատարվող դրական փոփոխությունները մեր համաքաղաքացիների համար ոչ միայն ակնառու, այլև «սովորական» դարձան: Այսօր արդեն մեզանից ոչ ոք այլևս չի պատկերացնում քաղաքային միջավայրն ու առօրյան առանց այդ փոփոխությունների և զարգացումների:

Մայրաքաղաք Երևանի սիրելի՛ բնակիչներ, համոզվա՛ծ եմ, որ հաջորդող տարիներին ևս նույն նվիրումով, սրտացավությամբ և հետևողականությամբ մենք միասին շարունակելու ենք կյանքի կոչել իրատեսական ծրագրեր՝ ապահովելով մայրաքաղաքի կայուն զարգացումը:

Երևանի քաղաքապետ՝
ՏԱՐՈՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ



Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի սիրելի՛ բնակիչներ,

2016 թվականը ևս ամփոփում ենք որոշակի հաջողություններով ու ձեռքբերումներով, ինչի առթիվ շնորհավորում եմ բոլորիս: Եվ այդ ամենում, անշուշտ, իր ներդրումն ունի ձեզանից յուրաքանչյուրը, ինչն իսկապես գնահատանքի է արժանի: Մեր բակերի, փողոցների, այգիների և խաղահրապարակների շարունակական բարեկարգումը ներկայանալի տեսք է տալիս մեր միջավայրին և, որ ամենակարևորն է, այդ ստեղծված միջավայրի պահպանման հարցում ավելի ակնհայտ է դառնում յուրաքանչյուրիդ սրտացավությունը: Վարչական շրջանի աշխատակազմն էլ ամենայն պատասխանատվությամբ է վերաբերվում իր առջև դրված խնդիրներին և ձգտում է ժամանակին տալ դրանց լուծումները: Համոզված եմ, որ մեր համատեղ աշխատանքի արդյունքում մենք միասին ավելի բարեկարգ ու ներկայանալի կդարձնենք մեր վարչական շրջանը:

Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավար՝
Արտակ Ալեքսանյան

ԿԱՆԱՉԱՊԱՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Վերանորոգվել է **968 գծմ** երկարու թյամբ ոռոգման ցանց:

Տնկվել են **7 078 ծառ**, մոտ **1 000** հատ վարդի թուփ:

Էտվել է **522** ծառ:







ԲԱԿԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ

Բարեկարգման աշխատանքներ են իրականացվել 36 բակային տարածքներում

- Տեղադրվել են **74** համալիր մանկական խաղեր, մարզասարքեր և զրուցարաններ:
- Վերակառուցվել են **3** անցուղիների աստիճաններ:
- Կառուցվել է արհեստական խոտածածկույթով մեկ ֆուտբոլի դաշտ:
- Տեղադրվել է արտաքին լուսավորության **55** հենասյուն:
- Նկարազարդվել է **1 740 մ²** բակային տարածք:
- Նորոգվել կամ նորով է փոխարինվել Էլեկտրական ցանցի թեքված և վթարային **18** հենասյուն:





ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ», «ԵՐԵՎԱՆ ՋՈՒՐ», «ԵՐԵՎԱՆ ԳԱԶ» ՓԲԸ-ների ՀԵՏ

Հաղթանակ թաղամասում անցկացվել է 215 մ երկարությամբ ջրագիծ («Երևան Ջուր» ՓԲԸ):









- Վարչական շրջանում կառուցվել է **43** թեքահարթակ:
- Բանակի օրվա առիթով ՀՀ զինված ուժերում միաժամանակ ծառայող երկու եղբայրների, **13** ծնողների և **5** զոհվածների ծնողների տրամադրվել է դրամական խրախուսանք:
- Երեխաների պաշտպանության միջազգային օրվա առիթով **30** երեխաների տրամադրվել է շրջիկ կրկեսի տոմսեր:
- Ընտանիքի միջազգային օրվա առիթով **4** օրինակելի ընտանիքների տրամադրվել է դրամական խրախուսանք:
- **91** ծնողներ այցելել են ԼՂՀ և ՀՀ սահմանամերձ գոտիներում ծառայող իրենց զավակներին:



Համագործակցություն ՀԿ-ների և միջազգային կազմակերպությունների հետ

Տարբեր սոցիալական ծրագրեր են իրականացվել «Մեզ բացակա չդնեք», «Առաքելություն Հայաստան», «Թուֆենկյան հիմնադրամ», «Կամրջակ», «Խուլերի միավորում», «Հանս Քրիստիան Կոֆոեդ», «Դիակոնիա» (47 ընտանիքի տրամադրել են սննդի փաթեթներ) ՀԿ-ների, Երկրապահ կամավորականների միության և «Ալեքսանյանների ընտանիք» բարեգործական հիմնադրամի հետ:

«Ալեքսանյանների ընտանիք» բարեգործական հիմնադրամի կողմից (ի դեմս Սամվել Ալեքսանյանի) վարչական շրջանում իրականացվել են **43.571.000 դրամի** բարեգործական տարբեր ծրագրեր:

Աջակցություն սոցիալապես անապահով ընտանիքներին, սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին

- Ամանորի առթիվ **5 000 ընտանիք** ստացել է սննդի փաթեթ:
- Սուրբ Զատիկի առիթով վարչական շրջանի **3 000 ընտանիքի** տրամադրվել է պարենային օգնություն:
- Վարչական շրջանի **140 երեխա** ամառային հանգիստն անցկացրել է Հանքավանի «Արագած» առողջարանային ճամբարում:
- «Գիտելիքի միջազգային օրվա» կապակցությամբ 1-4-րդ դասարանների սոցիալապես անապահով **400 երեխայի** տրամադրվել են գրենական պիտույքների փաթեթներ:
- Վարչական շրջանում բնակվող սիրիահայ **48** ընտանիք ստացել է անհրաժեշտ կենցաղային տեխնիկա և դրամական աջակցություն:
- **«Էրեբունի-Երևան 2798»** տոնակատարության շրջանակում սոցիալապես անապահով **287 ընտանիքի** տրամադրվել է կենցաղային տեխնիկա:
- Տարեցների միջազգային օրվա առիթով **44 տարեցների** տրամադրվել է դրամական օգնություն, **2 տարեցների** ծննդյան տոնի առիթով տրամադրվել է դրամական օգնություն:
- Երևանի թիվ 1 տուն-ինտերնատին նվիրաբերվել է **4 գազօջախ**:
- Հայրենական մեծ պատերազմի հաղթանակի 71-ամյակի առիթով կազմակերպվել է միջոցառում, ճաշկերույթ և **25 մասնակիցների** տրամադրվել է դրամական աջակցություն:
- Հաշմանդամների միջազգային օրվա առթիվ 100 հաշմանդամի տրամադրվել են նվերներ:½











Վարչական շրջանի ղեկավարի աջակցությամբ մանկապարտեզներում կատարվել են ջրագծերի, կոյուղագծերի փոխարինման, դիտահորերի մաքրման, խմբասենյակների, խոհանոցների վերանորոգման, օդորակիչների տեղադրման, գույքի ձեռքբերման, ցանկապատերի, տաղավարների ներկման, բակերի ասֆալտապատման աշխատանքներ:

Բարեկարգվել է հ. 96 մանկապարտեզի բակային տարածքը՝ 5 079.4 մ²:

Երևանի քաղաքապետարանի կողմից

- հիմնանորոգվել է հ.89 մանկապարտեզը՝ **2 636.0 մ²**,
- մանկապարտեզներում իրականացվել է գույքի արդիականացում,
- հիմնանորոգվել է մանկապատանեկան համալիր մարզադպրոցը՝ **867.0 մ²**:









- Կազմակերպվել են մշակութային միջոցառումներ Հայոց բանակի 24-ամյակի, Տեառնընդառաջի, Կանանց միջազգային տոնի, Վերջին զանգի, Երեխաների պաշտպանության օրվա, Առաջին զանգի, «Էրեբունի-Երևան 2798» -ի , Ամանորիև այլ տոների առթիվ:
- Ալ. Աճեմյանի անվան երաժշտական դպրոցում և «Սեբաստիա» մշակութային կենտրոնում կազմակերպվել են մեծարման ցերեկույթներ՝ նվիրված հայտնի և սիրված երգչուհի Սիբիլին, Լիբանանահայ երաժիշտ, «Գյուրջիև» խմբի ղեկավար՝ Լևոն Էսկենյանին և արգենտինահայ պարուհի Մելինե Մասմանյանին:
- Ֆրանկոֆոնիայի՝ հայ-ֆրանսիական բարեկամության օրը, նշվել է շրջանի Կենտրոնական գրադարանում՝ ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, խմբավար, դիրիժոր, երաժշտագետ Դանիել Երաժիշտի դասախոսությամբ:
- Հանրակրթական դպրոցների սաների մասնակցությամբ կազմակերպվել է «Մեզ բացակա չդնեք» խորագրով երգի և պարի մրցույթ–փառատոն՝ նվիրված ապրիլյան քառօրյա պատերազմում հերոսաբար զոհված զինվորների վառ հիշատակին:
- Հ. 174 հիմնական դպրոցում բացվել է փառքի սրահ՝ ի հիշատակ ապրիլյան քառօրյա պատերազմում զոհված Հրաչյա Սամվելի Մուրադյանին:
















Վարչական շրջանի թիմերը մասնակցել են

- Շախմատի օլիմպիադային,
- Ղազախստանի և Վրաստանի բասկետբոլի հավաքական թիմերի հետ հանդիպումներին,
- ՀՀ Անկախության 25-րդ տարեդարձին նվիրված դպրոցականների 25-րդ մարզական խաղերին,
- «ՀՀ Ազգային ժողովի գավաթի խաղարկություն» մարզական միջոցառմանը,
- ՀՀ նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթին,
- «Առողջ սերունդ՝ պաշտպանված հայրենիք» համաքաղաքային բակային փառատոնին,
- Վանաձոր քաղաքում կազմակերպված դպրոցականների հանրապետական առաջնությանը, դարձել չեմպիոն և իրավունք ստացել մասնակցելու 2017թ. գարնանը Խորվաթիայի մայրաքաղաք Զագրեբ քաղաքում կազմակերպվող դպրոցականների աշխարհի առաջնությանը,
- «Երևանյան մարզական ամառ-2016» ծրագրի շրջանակներում «Ջրաշխարհ» համալիրում կազմակերպված միջոցառմանը:









- Նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության հանրապետական ռազմամարզական խաղերին,
- ՌԴ Կրասնոդար քաղաքում ԱՊՀ երկրների 4-րդ միջազգային փառատոնին (կիսաեզրափակչում հաղթել են Ադրբեջանի հավաքականին) և գրավել 2-րդ տեղը,
- Կիպրոսի մայրաքաղաք Նիկոսիայում կազմակերպված Եվրոպայի C դիվիզիայի առաջնությանը,
- Իսրայելում կազմակերպված դպրոցականների թենիսի աշխարհի առաջնությանը:

Վարչական շրջանի բասկետբոլիստներ Ինգա Մանուչարյանը և Էլեն Համբարձումյանը Հայաստանի մինչև 18 տարեկան աղջիկների հավաքական թիմի կազմում մասնակցել են Թբիլիսիում կազմակերպված Եվրոպայի C դիվիզիայի առաջնությանը և դարձել չեմպիոն: Նրանց շնորհվել է միջազգային կարգի սպորտի վարպետի կոչում:









- Վարչական շրջանի **62 անապահով** բնակիչների տրամադրվել է միջնորդագիր՝ բուժումը պետպատվերի շրջանակում իրականացնելու համար:
- Առողջարանային ուղեգիր է ստացել **4 քաղաքացի**:
- Հովանավորի կողմից «Մալաթիա-Նատալի ֆարմ» բժշկական կենտրոնում անվճար հետազոտվել և վիրահատվել է **181 քաղաքացի**:





ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ

Երևան և Սանկտ Պետերբուրգ քաղաքների միջև հաստատված համագործակցության շրջանակում Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի և Սանկտ Պետերբուրգի Մոսկովսկի շրջանի միջև ստորագրվել է համագործակցության համաձայնագիր: Փաստաթուղթը ստորագրել են վարչական շրջանների ղեկավարներ Արտակ Ալեքսանյանը և Վլադիմիր Ուշակովը:







Կազմակերպվել են այցելություններ ԼՂՀ Քաշաթաղի շրջան, Ստեփանակերտ և սահմանամերձ զորամասեր: Տեղի են ունեցել հանդիպումներ Ստեփանակերտի քաղաքապետի, Քաշաթաղի և Բերձորի վարչակազմերի, դպրոցների և մանկապարտեզների տնօրենների, ինչպես նաև զորամասերի սպայական անձնակազմերի և զինվորների հետ:

- Վարչական շրջանի դպրոցների սաները մասնակցել են Մոսկվայում, Եկատերինբուրգում, Բուլղարիայում, Ֆրանսիայում, Շվեյցարիայում, Մալթայում և Ամերիկայի Միացյալ Նահանգներում և Գերմանիայում կազմակերպված սպորտային և մշակութային փառատոներին և շահել մրցանակներ:

- Ֆրանսիայի Դրագինյան քաղաքի հայ համայնքի ներկայացուցիչների համար կազմակերպվել են այցեր Հայաստանի պատմամշակութային վայրեր (թանգարաններ, եկեղեցիներ):

- «Սեբաստիա» մշակութային կենտրոնը մասնակցել է Ստեփանակերտում, Վրաստանի Զուգդիդի և Թբիլիսի քաղաքներում, Աջարիայում կազմակերպված մշակութային միջոցառումներին:



- Վարչական շրջանի հ. 91 մանկապարտեզում կրթության ազգային ինստիտուտի կողմից կազմակերպվել է «Ինտեգրացված պարապմունք» թեմայով սեմինար: Սեմինարին մասնակցել են ԱՄՆ-ից, Սիրիայից, Լիբանանից, Բուլղարիայից և Վրաստանից ժամանած մանկավարժներ:

- ՀՀ սփյուռքի նախարարության կողմից կազմակերպված «Արի տուն» ծրագրի շրջանակներում վարչական շրջանում հյուրընկալվել է սփյուռքից ժամանած 32 երեխա (ԱՄՆ, Կիպրոս, Բուլղարիա, Ռուսաստան, Վրաստան, Ֆրանսիա):

- Ամերիկայի Միացյալ Նահանգների Մինեսոտայի համալսարանի փորձագետները «Հաշմանդամություն ունեցող երեխաների աջակցման մեխանիզմների» ծրագրով այցելել են վարչական շրջանում գործող հ. 92 մանկապարտեզ, ծանոթացել մանկապարտեզում ներառական կրթության ուղղությամբ տարվող աշխատանքներին, և պայմանավորվածություն է ձեռք բերվել փորձի փոխանակման և հետագա համագործակցության համար:

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ

2016թ. Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում իրականացվել են ընթացիկ վերանորոգման, փողոցների, մայթերի և բակերի ասֆալտապատման, սալիկապատման, թեքահարթակների կառուցման և լուսավորության ցանցի արդիականացման աշխատանքներ.

- ասֆալտապատում՝ **76 000 մ²**,
- սալիկապատում՝ **48 մ²**,
- եզրաքարերի փոխարինում և վերանորոգում՝ **142 մ,**
- թեքահարթակների կառուցում՝ **43 հատ:**








Վարչական շրջանում ևս **5** հասցե ապահովվել է **2 240 կմ** երկարությամբ լուսավորության ցանցով:

ԲՆԱԿՖՈՆԴԻ ՊԱՀՊԱՆՈՒՄ

Վերանորոգվել են


- **2 383 մ²** թեք տանիք,
- **10 452 մ²** հարթ տանիք,
- **65** շքամուտք (բոլոր հարկերը)՝

Երևանի քաղաքապետարանի և համատիրությունների հետ համագործակցության արդյունքում,

- **12** պատշգամբ՝ **12** բնակարաններում:





2016

ՄԱԼԱԹԻԱ-ՍԵԲԱՍՏԻԱ
ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Թեժ գիծ՝

+(374 11) 518-588

malatia_sebastia@yerevan.am



www.yerevan.am